U.S. Department of Housing and Urban Development
Office of Housing Office of Multifamily Housing Programs

ՓԱՍՏԱԹԵՐԹԻԿ

“Բնակարանային ապահովման և քաղաքային զարգացման բաժնի” (Department of Housing and Urban Development, HUD)-ի Կողմից Օժանդակություն Ստացող Բնակիչների Համար

Վարձակալման օգնության վճարումներ (Rental Assistance Payments, RAP)

“ԻՆՉՊԵՍ Է ՈՐՈՇՎՈՒՄ ՁԵՐ ՎԱՐՁԸ”

Բնակարանային ապահովման գրասենյակ
(HUD)

****Հունիս 2007 թ.****

Սույն Փաստաթերթիկն ընդհանուր ուղեցույց է հանդիսանում Տանտերերին/Կառավարման գործակալներին (Owner/Management Agents) (OA) և HUD-ի կողմից օժանդակություն ստացող բնակիչներին՝ տեղեկացնելու համար եկամտի հայտարարագրման և ստուգման վերաբերյալ իրենց պատասխանատվությունների մասին:

Ինչու՞ է կարևոր ճիշտ որոշել եկամտի չափն ու վարձի գումարը

“Բնակարանային ապահովման և քաղաքային զարգացման բաժնի” (Department of Housing and Urban Development) ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ շատ բնակիչ-ընտանիքներ սխալ գումարի վարձ են վճարում: Այս խնդրի հիմնական պատճառներն են.

- Բնակիչ-ընտանիքների կողմից իրականից ցածր եկամտի հայտարարագրումը, և
- Բնակիչ ընտանիքներին հասանելիք անտեսումների և նվազեցումների մերժումը OA-ների կողմից:

Եվ OA-ները, և բնակիչները պատասխանատու են ճիշտ գումարի վարձի վճարումն ապահովելու գործում:

OA-ների պատասխանատվությունները.

- Ճշգրիտ տեղեկություններ ստանալ եկամտի մասին
- Ստուգել բնակչի հայտարարագրված եկամուտը
- Ապահովել, որ բնակիչները ստանան իրենց հասանելիք անտեսումներն ու նվազեցումները
- Ճշգրիտ կերպով հաշվել Վարձակալի վարձի գումարը
- Վարձակալներին տրամադրել “Վարձակալման պայմանագրերի” և “Եկամտի ու վարձի գումարի” մասին որոշումների կրկնօրինակները
- Վերահաշվարկել վարձի գումարը, երբ ընտանիքի կառուցվածքում փոփոխություններ են գրանցվում
- Վերահաշվարկել վարձի գումարը, երբ բնակչի եկամուտը նվազում է
- Վերահաշվարկել վարձի գումարը, երբ բնակչի եկամուտը ամսական $200 կամ ավելի մեծ գումարով բարձրանում է
- Պահանջի դեպքում տեղեկություններ տրամադրել OA կարգերի մասին
- Եկամտի հայտարարագրման կամ վարձի գումարը որոշելու պայմաններում կամ սահմանված կարգերում որևէ փոփոխությունների մասին տեղեկացնել բնակիչներին

Բնակիչների պատասխանատվությունները.

- Ճշգրիտ տեղեկություններ տրամադրել ընտանիքի կառուցվածքում փոփոխությունների մասին
- Հայտարարագրել ամբողջ եկամուտը
- Եկամուտը և ծախսերը հավաստող փաստաթղթերի, ձևաթղթերի և ստացականների պատճենները պահել
- Զեկուցել ընտանիքի կառուցվածքում և եկամտում այն փոփոխությունների մասին, որոնք տեղի են ունենում տարեկան վերավավերացումների միջև ընկած ժամանակաշրջանում
- Ստորագրել եկամտի ստուգման մասին համաձայնության ձևերը
- Ենթարկվել վարձակալման պայմաններին և բնակության կարգերին

Եկամտի չափի որոշումը

Ընտանիքի ակնկալվող համախառն (մինչև պահումները) եկամտից է կախված ոչ միայն օգնություն ստանալու իրավասությունը, այլ նաև ընտանիքի կողմից վճարվելիք վարձի գումարի չափը և ակնկալվող նպաստը: Ակնկալվող եկամուտը՝ ներառյալ ընտանիքի կողմից ստացվելիք անտեսումների և նվազեցումների, հաջորդ տասերկու (12) ամսվա ընթացքում, կօգտագործվի ընտանիքի կողմից վճարվելիք վարձի գումարի չափը որոշելու համար:

Ի՞նչ է տարեկան եկամուտը:

Համախառն եկամուտ – Եկամտի անտեսումներ = Տարեկան եկամուտ

Ի՞նչ է ուղղված եկամուտը:

Տարեկան եկամուտ – նվազեցումներ = Ուղղված եկամուտ

Վարձակալի կողմից վճարվելիք վարձի գումարի չափի որոշումը

Վարձակալման օգնության վճարման (Rental Assistance Payment) (RAP) դեպքում վարձի բանաձևն է.
Այն վարձը, որն ընտանիքը կվճարի, հետևյալ գումարներից **ամենաբարձրն** է.

- Ընտանիքի ամսական *ուղղված* եկամտի 30%-ը
- Ընտանիքի ամսական եկամտի 10%-ը
- Նպաստի ձևով վճարվելիք վարձը կամ գործակալության կողմից նպաստի վճարումը՝ ընտանիքին օգնելու բնակության ծախսերը վճարելու նպատակով:
- Նշում. **Տանտերը կարող է դիմորդին ընդունել RAP ծրագրի շրջանակներում միայն, եթե Վարձակալի ընդհանուր վճարումը ավելի ցածր է, քան բնակարանի համախառն վարձը:**

Եկամուտ և ունեցվածք

HUD-ի կողմից օգնություն ստացող բնակիչներից պահանջվում է ներկայացնել Տանտիրոջը կամ Գործակալին (OA) բոլոր աղբյուներից ստացվող **ամբողջ** եկամուտը: Եկամտի անտեսումները կամ նվազեցումները վարձակալման ընթացակարգի մաս են կազմում:

Ունեցվածքից բխող եկամտի գումարը տարեկան եկամտի մեջ ներառման չափը որոշելիս՝ ունեցվածքից բխող իրական եկամուտը ներառվում է, բացի այն դեպքերից երբ ամբողջ ունեցվածքի կանխիկ դրամական արժեքը գերազանցում է $5,000, որի դեպքում որպես տարեկան եկամտում ներառվող գումար է վերցվում ամենաբարձրը՝ ընդհանուր ունեցվածքի 2%-ի կամ ունեցվածքից բխող իրական եկամտի:

Տարեկան եկամուտը ներառում է.

- Աշխատավարձի, արտաժամյա աշխատանքի դիմաց վճարման, տոկոսավճարի, վարձատրության, թեյավճարի և պարգևավճարի ու անձնական ծառայությունների դիմաց այլ հատուցման ամբողջ գումարը (մինչև աշխատավարձի պահումները)

- Բիզնեսից կամ մասնագիտական գործունեությունից ստացված զուտ եկամուտը
- Իրական կամ անձնական ունեցվածքի տոկոսավճարներ, շահաբաժիններ կամ այլ զուտ եկամուտներ (Տես “Ունեցվածքը ներառում է/Ունեցվածքը չի” ներառում ստորև)
- Պարբերականորեն ստացվող գումարների ամբողջ գումարը՝ Սոցիալական ապահովության (social security) համար, տարեկան ներդրումներից, ապահովագրությունից, թոշակներից, հաշմադամության կամ մահվան նպաստներից և պարբերականորեն ստացվող նմանատիպ այլ եկամտի տեսակներից, ներառյալ պարբերական գումարի հետաձգված սկզբի դիմաց միանվագ կամ պլանավորված ամսական գումարները **(բացի հավելյալ ապահովության եկամտի և սոցիալական ապահովության հետաձգված պարբերական վճարումների, տես “Բացառումներ տարեկան եկամտից”, ստորև)**
- Վճարումները գործազրկության, հաշմադամության դիմաց, աշխատողների հատուցման վճարումները և աշխատանքից ազատման դիմաց հատուցումները **(բացի ընտանեկան ուեցվածքի միանվագ ավելացումից, տես “Բացառումներ տարեկան եկամտից”, ստորև)**
- Սոցիալական օգնության (welfare) նպաստ
- Պարբերական և որոշակիորեն հաշվելի գումարները, ինպիսիք են՝ ալիմենտը և երեխայի ապրուստի համար վճարումներն ու կանոնավոր նվիրատվությունները կամ նվերները այնպիսի կազմակերպություններից կամ անձանցից, որոնք չեն բնակվում բնակարանում
- Ձինված ուժերի անդամին հատկացվող բոլոր կանոնավոր վճարումները, հատուկ վճարումները և պարբերաբար վճարները (բացի թշնամական կրակին ենթարկվելու համար հատուկ վճարումից)
- **Միայն “Հատված 8 ծրագրերի” (Section 8 programs) համար. ցանկացած ֆինանսական օգնություն՝ գերազանցող ուսման վարձի գումարը, որը անհատը կարող է ստանալ 1965 թ. Բարձրագույն կրթության մասին օրենքի (Higher Education Act of 1965) համաձայն, կհամարվի այդ անձի եկամուտը. սակայն, ֆինանսական օգնությունը տարեկան եկամուտ չի համարվում խնամառու երեխաներ ունեցող 23 տարեկանից ավելի բարձր տարիքի անձանց համար կամ, եթե ուսանողը բնակվում է իր ծնողների հետ, որոնք “Հատված 8”- ի շրջանակներում օգնություն են ստանում: Այս պարբերակի առումով, եկամուտը որոշելիս՝ ֆինանսական օգնությունը չի ներառնում վարկային միջոցներից ստացված եկամուտները:**

Ունեցվածքը ներառնում է.

- Բաժնետոմսեր, պարտատոմսեր, գանձատոմսեր, ներդրման վկայագրեր, դրամական շուկայի հաշիվներ
- Անհատական կենսաթոշակ և Keogh հաշիվներ (Keogh accounts)
- Կենսաթոշակի և թոշակի վճարումներ
- Կանխիկ գումար խնայողական և ընթացիկ հաշիվներում, չհրկիզվող պահարաններում, տներում և այլն
- Կյանքի ամբողջական ապահովագրության ապառիկ արժեքը՝ մատչելի անհատին մինչև մահանալը
- Բաժնետիրական սեփականություն վարձով տրվող ունեցվածքներում և այլ կապիտալ ներդրումներում
- Անձնական ունեցվածքը, օգտագործված որպես ներդրում
- Միանվագ գումարի ստացականներ կամ միանգամյա ստացականներ
- Դիմորդի կողմից ունեցած անշարժ գույքի գրավադրություն կամ վարկային վավերագրեր
- Արդար շուկայական արժեքից ավելի ցածր գնով վաճառված ունեցվածքներ:

Ունեցվածքը չի ներառնում.

- Անհրաժեշտ անձնական ունեցվածքը (հագուստ, կահույք, ավտոմեքենաներ,

հարսանեկան մատանի, հաշմանդամների համար հատուկ սարքավորումներ)
- Հնդկացիներին պատկանող հողերի տրաստային կառավարումից ստացված տոկոսավճարներ
- Կյանքի՝ սահմանափակ ժամկետով ապահովագրությունից ստացվող վճարումներ
- Բաժնետիրական սեփականություն՝ ընտանիքի կողմից բնակվող կոոպերատիվ սեփականություն հանդիսացող բնակարանում
- Ունեցվածք, որ գործող բիզնեսի մաս է կազմում
- Ունեցվածք, որը իրականում դիմորդին չի պատկանում կամ անհատի անունով է պահված, բայց
  - Ունեցվածքը և որևէ եկամուտ, որ նրանք ստանում են, բաժին է հասնում մեկ այլ անձի, որն ընտանիքի անդամ չէ, և
  - Այդ այլ անձն է պատասխանատու ունեցվածքից ծագող եկամտի եկամտահարկերի համար
- Ունեցվածք, որը մատչելի չէ դիմորդին և եկամուտ չի բերում դիմորդին (Օրինակ՝ ծեծի ենթարկված կինն իր ամուսնու հետ տան տեր է: Ընտանեկան իրավիճակի պատճառով, նա ոչ մի եկամուտ չի ստանում ունեցվածքից և չի կարող ունեցվածքը կանխիկ գումարի վերածել:)
- Արդար շուկայական արժեքից ավելի ցածր գնով վաճառված ունեցվածք, որը տեղի է ունեցել հետևյալի հետևանքով.
  - Սեփականության իրավունքի զրկում գրավի դրման պատճառով
  - Սնանկություն
  - Ամուսնալուծություն կամ բաժանման համաձայնություն, եթե դիմորդը կամ բնակիչը այլ կարևոր օգուտ է ստանում, բայց ոչ անպայման դոլլարով:

Անտեսումներ տարեկան եկամտից.
- 18 տարեկանից ավելի փոքր երեխաների (խնամառու երեխաները ներառյալ) աշխատանքից ծագող եկամուտ
- Վճարումներ, ստացած խնամառու երեխաների կամ խնամառու մեծահասակների համար (սովորաբար հաշմանդամություն ունեցող անձիք՝ վարձակալի ընտանիքին չվերաբերող, ովքեր որ ի վիճակի չեն միայնակ ապրել)
- Միանվագ ավելացումներ ընտանեկան ունեցվածքներին, ինչպիսիք են՝ ժառանգությունը, ապահովագրության վճարումները (առողջապահական և պատահարների ապահովագրության ու աշխատողների հատուցման վճարումները ներառյալ), կապիտալ ներդրումներից շահույթները, ինչպես նաև անձնական և ունեցվածքի կորստի դիմաց հատուցման վճարումները
- Ընտանիքի կողմից ստացած այն գումարները, որոնք հատուկ նախատեսված են կամ փոխհատուցում են որևէ ընտանիքի անդամի բժշկական ծախսերը
- Տանը բնակվող օգնականի եկամուտը
- ** Հատված 8 ծրագրի շրջանակներում. այն ուսանողների համար, որոնք բարձրագույն կրթության հաստատություն են ընդունվել, տարեկան եկամտի ներառման առումով,** ուսանողի ֆինանսական օգնության ամբողջ գումարը, որ կամ անմիջապես ուսանողին է վճարվում, կամ էլ՝ կրթական հաստատությանը
- Հատուկ վճարումը Զինված ուժերում ծառայող ընտանիքի անդամին, որը ենթարկվել է թշնամական կրակին
- Գումարներ՝ ստացված HUD-ի կողմից ֆինանսավորված ուսուցողական ծրագրերի համար
- Հաշմանդամ անձանց կողմից ստացած գումարները, որոնք սահմանափակ ժամկետով անտեսվում են “Հավելյալ ապահովության եկամտի” (Supplemental Security Income) և նպաստների իրավասության նպատակներով, որովհետև դրանք առանձնացված են Ինքնաբավ կացության ձեռքբերման ծրագրի (Plan to Attain Self-Sufficiency) (PASS) տակ

- Մասնակցի կողմից ստացված գումարները այլ հանրային օգնության ծրագրերից, որոնք հատկապես նախատեսված են կամ կանխիկ ծախսերը (հատուկ սարքավորումներ, հագուստ, տրանսպորտի միջոցներ, երեխայի խնամք և այլն) փոխհատուցելու համար, կամ որոնք զուտ կատարվում են որոշակի ծրագրերին մասնակցելու հնարավորություն տալու նպատակով
- Բնակչի սպասարկման թոշակ (Resident service stpend), որը չի կարող գերազանցել ամսական $200)
- Աճող եկամուտներ, որոնք արդյունք են ընտանիքի որևէ անդամի՝ Նահանգային կամ տեղական աշխատանքային վերապատրաստման սահմանված ծրագրերին մասնակցելու և ընտանիքի անդամի՝ անձնակազմի ղեկավարման դերի համար պատրաստումից
- Ժամանակավոր, չկրկնվող կամ անկանոն եկամուտ (նվերները ներառյալ)
- Ռեպարացիայի վճարումներ կատարված օտար պետությունների կողմից հայցերի դիմաց համաձայն այդ երկրի օրենքների այն անձանց, ովքեր հետապնդվել են նացիստական ժամանակաշրջանում
- 18 կամ ավելի մեծ տարիքի յուրաքանչյուր լրիվ դրույքով ուսանողի հաշվով $480 գերազանցող եկամուտները՝ (բացառությամբ ընտանիքի ղեկավարի, կողակցի կամ ամուսնու)
- Որդեգրման աջակցման ծրագրերի շրջանակներում $480 գերազանցող գումարը՝ յուրաքանչյուր որդեգրված երեխայի համար
- Հավելյալ ապահովության եկամտի և սոցիալական ապահովության նպաստների այն վճարումները, որոնք ստացվել են հետաձգված պարբերական վճարումների դիմաց միանվագ գումարով կամ պլանավորված ամսական գումարներով
- Ընտանիքի կողմից ստացված գումարներ բնակարանի սեփականություն հարկերի համար փոխհատուցման կամ զեղչերի տեսքով՝ ըստ Նահանագային կամ տեղական օրենքի
- Նահանգային գործակալության կողմից վճարված գումարներ ընտանիքին, որը զարգացման անկարողությամբ անդամ ունի, որն ապրում է տանը, հատուցելու համար այն ծառայությունների և սարքավորումների համար, որոնք անհրաժեշտ են ընտանիքի զարգացման անկարողությամբ հաշմադամ անդամին տանը պահելու համար

Դաշնային օրենքով պարտավորված բացառումներ.

- 1977 թ. Պարենային կտրոնների օրենքով (Food Stamp Act of 1977) իրավասու ընտանիքին տրամադրված բաշխված արժեքը
- Վճարումներ 1973 թ. Տեղական կամավոր ծառայությունների օրենքով (Domestic Volunteer Services Act of 1973) իրավասու կամավորներին
- Վճարումներ՝ ստացված Ալյասկայի բնիկների հայցերի կարգավորման օրենքին (Alaska Native Claims Settlement Act) համաձայն
- Եկամուտ՝ բխված ԱՄՆ-ի որոշակի ենթասահմանային հողերից, որը պահվում է որոշ Հնդկացի ցեղերի տրաստային խնամակալության տակ
- Վճարումներ՝ կատարված Առողջապահական և մարդկային ծառայությունների բաժնի (Department of Health and Human Services) Ցածր եկամտով տնային տնտեսություններին էներգիայի օգնության ծրագրերի (Low-Income Home Energy Assistance Program) համաձայն
- Վճարումներ՝ ստացված ծրագրերից, որոնք ամբողջությամբ կամ մասնակիորեն ֆինանսավորված են Աշխատանքի պատրաստման ընկերակցության օրենքին (Job Training Partnership Act) համաձայն
- Եկամուտ՝ բխված Օտտավայի Գրանդ Ռիվեր Բանդի հնդկացիներին (Grand River Band of Ottawa Indian) հատկացված գումարներից
- Մեկ անձի հաշվով բաժնետոմսերի առաջին $2000՝ ստացված դատական կարգավորման գումարներից (judgment funds) պարգևվված Հնդկացիների հայցերի հանձնաժողովի (Indian Claims Commission) կամ ԱՄՆ-ի Հայցերի դատարանի կողմից (US. Claims Court); անհատ

հնդկացիների շահութավճարները բխված խնամակալ (տրաստային) կառավարման կամ սահմանափակ օգտագործման հողերում՝ ներառնելով եկամտի տարեկան $2000՝ ստացված անհատ հնդկացիների կողմից այն ֆոնդերից որը բխում են այդպիսի խնամակալության կամ սահմանափակ հողերից ստացված շահույթներից

- Ուսանողական դրամաշնորհների գումարներ՝ ֆինանսավորված 1965 թ. Բարձրագույն կրթության IV Վերնագրի (Title IV of the Higher Education Act of 1965) համաձայն՝ Դաշնային աշխատանք-ուսում ծրագրի (Federal work-study program) կամ Հնդկացիների գործերի գրասենյակի (Bureau of Indian Affairs) ուսանողների օգնության ծրագրերի տակ պարգևները ներառյալ
- Վճարումներ՝ ստացված այն ծրագրերից, որոնք ֆինանսավորվել են 1985 թ. Տարեց ամերիկացիների օրենքի V Վերնագրի (Title V of the Older Americans Act of 1985) համաձայն
- Վճարումներ ստացված 1989 թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո “Agent Orange” Կարգավորման հիմնադրամից” (Agent Orange Settlement Fund) կամ որևէ այլ հիմնադրամից՝ հիմնված *In Re Agent* -ապրանքի պարտավորվածության դատավարության հետևանքով (product liability litigation)
- Վճարումներ ստացված 1980 թ. Մեյնի հնդկացիների հայցերի կարգավորման օրենքին (Maine Indian Claims Settlement Act of 1980) համաձայն
- Երեխայի ցանկացած խնամքի արժեքը տրամադրված կամ կազմակերպված (կամ ցանկացած գումար ստացված այդպիսի խնամքի համար կամ այդ խնամքի ծախսերի փոխհատուցման, 1990 թ. Երեխայի խնամքի և զարգացման շնորհի մասին օրենքի (Child Care and Development Block Grant Act of 1990) համաձայն
- Եկամտահարկի վարկային հատուցման (Earned income tax credit, EITC) վճարումներ՝ ստացված հունվարի 1-ին, 1991 թ. կամ դրանից հետո
- Վճարումներ Հնդկացիների հայցերի հանձնաժողովի (Indian Claims Commission) կողմից Յակիմա հնդկացի ազգի կոնֆեդերացված ցեղերին և խմբերին (Confederated Tribes and Bands of Yakima Indian Nation) կամ Մեսկալերո ռեզերվացիայի Ապաչե ցեղին (the Apache Tribe of Mescalero Reservation)
- Գումարներ, եկամտավճարներ և վճարումներ AmeriCorps-ի մասնակիցներին 1990 թ. Ազգային և համայնքային ծառայության օրենքին համաձայն (National and Community Service Act of 1990)
- Ցանկացած գումար՝ վճարված ըստ 38U.S.C. 1805-ի (38U.S.C. 1805) պայմանների Վյետնամի վետերանի՝ սպինա բիֆիդայով (spina bifida) հիվանդ երեխային
- Հանցագործության զոհին վճարված փոխհատուցման ցանկացած գումար՝ Հանցագործության զոհերի մասին օրենքի օրենքի (Victims of Crime Act) համաձայն, ստացված հանցագործության զոհերին օգնության ծրագրի (կամ այդպիսի օգնության ծախսի փոխհատուցման) միջոցով՝ Հանցագործության զոհերի մասին օրենքի (Victims of Crime Act) սահմաններում, դիմորդի դեմ հանցագործության հետևանքով, համաձայն Հանցագործության զոհերի մասին օրենքի (Victims of Crime Act)
- Գումարներ, եկամտավճարներ և վճարումներ 1998 թ. Աշխատուժի ներդրման օրենքի (Workforce Investment Act of 1998) համաձայն՝ մասնակցող անհատներին:
- Վետերանների գործերի բաժնի (Department of Veterans Affairs)՝ հաշմադամության որևէ հետաձգված նպաստ, ստացված միանվագ գումարով կամ պլանավորված ամսական գումարներով վարձակալի կողմից, որպեսզի բավարարեն 2008 թ. Բնակման և տնտեսական վերականգնման օրենքի պայմաններին (Housing and Economic Recovery Act of 2008, HERA)

Պահումներ.

- $480՝ յուրաքանչյուր կախյալի համար, լրիվ դրույքով ուսանողները կամ հաշմանդամ անձիք ներառյալ
- $400՝ ընտանիքի տարեց կամ հաշմանդամ անդամի համար
- Ընտանիքի տարեց կամ հաշմանդամ անդամի որևէ չփոխհատուցված բժշկական ծախս, որը գերազանցում է Տարեկան եկամուտը ավելի քան 3%-ով
- Խնամակալի ծախսերի և օժանդակ սարքի չփոխհատուցված չափավոր ծախսերը ընտանիքի հաշմանդամ անդամ(ներ)ի համար, որպեսզի հնարավորություն տալ ընտանիքի անդամ(ներ)ին աշխատել, սակայն որի ընդհանուր գումարը չի գերազանցում Տարեկան եկամտի 3%-ը
- Եթե ընտանիքի տարեց անդամն ունի և չփոխհատուցված բժշկական ծախսեր և հաշմանդամության օժանդակման ծախսեր, ապա ընտանիքի եկամտի ծախսի 3%-ը կիրառվում է միայն մեկ անգամ
- Մինչև 13 տարեկան երեխայի խնամքի որևէ չափավոր ծախս, որպեսզի հնարավորություն տալ ընտանիքի անդամին աշխատանք ունենալ կամ նպաստել նրա կրթությանը:

Ծանոթագրության նյութեր

Կանոնակարգեր.

- Ընդհանուր HUD Ծրագրի պահանջարկներ; 24 CFR Մաս 5 (General HUD Program Requirements;24 CFR Part 5)

Ձեռնարկ.

- 4350.3, Բազմանդամ ընտանիքներին բնակման նպաստների ծրագրերում մեկ շնչին հասնող տարածքի զբաղեցման պահանջներ (4350.3, Occupancy Requirements of Subsidized Multifamily Housing Programs)

Ծանուցումներ.

- “Դաշնային օրենքով պարտավորված բացառումներ” Ծանուցումներ 66 FR 4669, Ապրիլի 20, 2001 թ. “Federally Mandated Exclusions” Notice 66 FR 4669, April 20, 2001

Լրացուցիչ տեղեկությունների համար.

Լրացուցիչ տեղեկություններ HUD-ի ծրագրերի մասին կարող եք ստանալ HUD-ի ինտերնետային կայքէջից՝ http://www.hud.gov հասցեյով